



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Սեպտեմբեր 2017, թիվ 9(109)

Խմբագրական

ԹԵՐԱՑՈՒՄՆԵՐ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Ցանկացած երկրում տեղական ինքնակառավարման կայացած համակարգի առկայությունը ժողովրդավարության ամրապնդման անհրաժեշտ նախապայման է: Տեղական ինքնակառավարման մարմինները, ամենամոտը լինելով բնակչությանը, պետք է օժտված լինեն լիազորությունների լայն շրջանակով և ապահովված լինեն դրանք իրականացնելու համար բավարար ռեսուրսներով (այդ թվում՝ ֆինանսական): Սա են պահանջում եվրոպական արժեքները, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում» ամրագրված սուբսիդիարության սկզբունքը:

Հայաստանը դեպի տեղական իշխանություններ՝ լիազորությունների ապակետորոնացման ամենացածր մակարդակ ունեցող երկրներից է: Հանրային լիազորությունների հետագա ապակետորոնացման հիմնական խոչընդոտներից մեկը տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածությունն է, փոքր, հանրային ծառայություններ մատուցելու համար ոչ ունակ մեծ թվով համայնքների առկայությունը: Դա է պատճառը, որ 2015թ. Հայաստանում սկիզբ են առել երկար ժամանակ քննարկված և սպասված վարչատարածքային բարեփոխումները: Նման բարեփոխումներ իրականացվել են իրականացվում են արեւմտյան և հետխորհրդային մի շարք երկրներում:

Հայաստանում վարչատարածքային բարեփոխումներն իրականացվում են՝ ընտրելով համայնքների խոշորացման փնջային տարբերակը: Բարեփոխումների մեկնարկին նախորդել են երկար տարիների փորձագիտական ուսումնասիրություններ, քննարկումներ, և ի վերջո, ՀՀ կառավարության կողմից համապատասխան հայեցակարգի ընդունում, որտեղ նախանշվել են որոշակի կանոններ և սկզբունքներ: Տրամաբանությունը հուշում էր, որ 3 փնջերում իրականացված պիլոտային ծրագրի միջոցով վարչատարածքային բարեփոխումների մեկնարկի նպատակը պետք է լինի դրանցից համապատասխան դասեր քաղելը: Ձեռք բերված արդյունքների, թույլ տրված բացթողումների ու թերացումների գնահատման միջոցով հնարավոր կլինի բարեփոխումների հետագա փուլերում խուսափել նկատված թերություններից և առավել ամբողջական պատկերացում կազմել ՀՀ վարչատարածքային վերջնական բաժանման մասին՝ հաշվի առնելով գործընթացի մասնակից և շահառու բոլոր կողմերի կարծիքները, ինչպես նաև ուրվագծելով նոր ձևավորվող համայնքների ընդհանուր թիվն ու վարչական սահմանները:

Սակայն, գործնականում համայնքների խոշորացման պիլոտային փուլին անմիջապես հաջորդեց խոշորացման լայնածավալ գործընթաց՝ նախ, ձևավորելով և 15 և ապա 34 նոր փնջեր: Փաստացի, նախկինում գործող 915 համայնքների գրեթե կեսը խոշորացվեց՝ առանց պահպանելու սահմանված «խաղի կանոնները» և առանց հաշվի առնելու քաղած դասերը:

Նոր ձևավորվող համայնքների քարտեզների և դրանցում ընդգրկվող համայնքների ցանկի որոշ դեպքերում խիստ սուբյեկտիվ լինելը հուշում է, որ դրանք կազմվել են «փակ դռների հետեւում»:

Որեւէ կերպ չեն դիտարկվել սահմանային անվտանգության հարցերը՝ հայ-ադրբեջանական հակամարտության շփման գոտուն հարակից համայնքների խոշորացման փնջերը կազմելիս:

Չեն ստեղծվել խոշորացված համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի համար իրենց ինքնությունը պահպանելու, կարիքի և առկա ռեսուրսների միջեւ համամասնությունն ապահովելու երաշխիքներ:

Չեն կատարվել միջհամայնքային միավորումների ինստիտուտի ստեղծմանն ու կայացմանն ուղղված օրենսդրական գործնական քայլեր:

Եվ այսպես, ՀՀ վարչատարածքային բարեփոխումների նախապատրաստական փուլի երկար դանդաղկոտությունն ու իրականացման փուլի անհիմն շտապողականությունը, ՏԻՄ-երի ընտրական համակարգում կատարվող և ակնկալվող փոփոխությունները խիստ մտահոգության և տարակուսանքի առիթ են:

Այս գործընթացներում նկատվող թերացումները խոսուն վկայություն են այն փաստի, որ Հայաստանում դեռևս չկա հստակ ձևավորված պատկերացում կայացած և արդյունավետ տեղական ինքնակառավարման համակարգի մասին, չկա այն տեսլականը, թե ինչպիսին պետք է լինի այն, և ինչպիսին ենք ցանկանում տեսնել այն ապագայում: Արդյունքում՝ չկա հստակ պատկերացում նոր ձևավորվող համայնքի նվազագույն, արդյունավետ և ընդունելի չափի և լիազորությունների ապակետորոնացման մակարդակի վերաբերյալ: Չկա «ապակետորոնացման ճանապարհային քարտեզ», որտեղ հստակորեն նշված կլինեն համայնքներին և միջհամայնքային միավորումներին փոխանցվող նոր լիազորությունների ժամկետները և շրջանակները, և որը գործնական քայլեր կատարելու կարելու հիմք կդառնա: Վարչատարածքային բարեփոխումները պետք է լինեն ոչ թե ինքնին նպատակ կամ արդյունք, այլ առավելապես պետք է միտված լինեն հենց լիազորությունների ապակետորոնացմանը և հանդես գան որպես վերջինիս՝ կյանքի կոչման միջոց:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՀԱՊՅԱՆ
Բ. ԱՅՎԱԶՈՎԱ

Խմբագրական խորհրդի անդամներ

ՀՖՄ ՀԵՐԹԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ



Ինչպես հայտնի է, Համայնքների ֆինանսիստների միավորումը Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումից ի վեր իրականացնում է այդ ոլորտի մոնիտորինգ: 2004 թվականից մինչ այժմ ՀՖՄ-ն այդ ուղղությամբ իրատարակել է ութ գիրք, որոնցում ներառվել են մեկ կամ մի քանի տարիների զեկույցներ, տրվել են ՏԻ բարեփոխումների ընթացքի տարեկան վերլուծությունները և գնահատականները, ինչպես նաև արվել են համապատասխան եզրակացություններ ու հետագայում աշխատանքների շարունակականությանը վերաբերող մի շարք առաջարկներ:

Օրերս հանրության դատին հանձնվեց «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» հերթական՝ իններորդ գիրքը, որի շնորհանդեսի ժամանակ հնչեցին բազմաթիվ գնահատանքի խոսքեր:

էջ 4-5 →

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2017թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղի ունեցավ «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույց» թեմայով աշխատաժողովը, որին ներկա էին ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի Հայաստանի թիմի ղեկավար Զաթրին Շեֆերը, ՏԿԶ փոխնախարարներ Վաչե Տերտերյանը և Վարազդատ Կարապետյանը, նախարարության աշխատակազմի վարչության պետեր, Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության (ԳՄՀԸ) ծրագրերի համակարգողներ Արմեն Զեյնյանը, Սուսաննա Բագրատունին, Գայանե Նալբանդյանը, ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի համակարգող Արթուր Դրամիյանը, Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը, 2015-16թթ. ընթացքում խոշորացված 18 համայնքների ղեկավարներ, փորձագետներ: Աշխատաժողովը վարում էր ՀՀ ՏԿԶ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին՝ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանը նշեց, որ ԳՄՀԸ-ի օժանդակությամբ պետք է համակարգվի համայնքների զարգացման գաղափարախոսությունը, ստեղծվի մոդել, որպեսզի դրանով կազմված փաստաթղթերի հետեւում ֆինանսավորում լինի, և դրանք իրականություն դառնան: Դա համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա մշակվող տարեկան պլանն է, որի մեթոդական ուղեցույցի մեջ հեղինակները չափորոշիչների շատ ճիշտ ընտրություն են կատարել, և դրանք համապատասխանում են նախարարության ռազմավարությանը, մարզպետների գնահատման չափորոշիչներին և այլն:

էջ 2 →

← էջ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նախարարը շնորհակալություն հայտնեց գԱՄՀ-ին համագործակցության համար և հավելեց, որ ընկերությունը նախարարության հետ միասնական թիմի մաս է կազմում՝ բարեկամ, որը օգտակար, լուրջ աշխատանք է կատարում:

«Ձեր շնորհիվ եւ կառավարության գործունեության արդյունքում 2018թ. հունվարի 1-ից համայնքներում սկսում ենք ԵՄ օժանդակությամբ մշակվող զարգացման ծրագրերը, որոնք հիմնականում ուղղվելու են խոշորացվող համայնքներում տարբեր զարգացման ծրագրերի իրականացմանը: Բայց ունենք խիստ պարտավորություններ՝ երեք հիմնական չափորոշիչներով սահմանված, ըստ որոնց էլ կֆինանսավորվի կոնկրետ զարգացման ծրագիրը: Առաջինը՝ խոշորացման տիրույթն է, որն արդեն հարթահարել էք ձեւավորված բազմաբնակավայր համայնքներում: Երկրորդ կարելու է հիմնական պայմանը՝ համայնքների բյուջեների կատարման արդյունավետությունն է, եւ երրորդ՝ ժողովրդավարության սկզբունքները»,- իր ելույթում ասաց Դ.Լոբյանը:

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիրը նպաստում է նաեւ տեղական տնտեսական ծրագրերի մշակմանը: Մենք աջակցում ենք խոշորացման առաջին փուլում ներառված 18 համայնքի՝ նպաստելով հիմնական գործառնությունների զարգացմանը, որոնց թվում են բյուջետավարումը, պլանավորումը, ծառայությունների մատուցումը եւ այլն: Կարելու է, որ պետքի պլանավորման գործընթացներն ավելի ներդաշնակեցվեն եւ սինխրոնիզացվեն բյուջետավարման գործընթացների հետ. այդպիսի սինխրոնիզացիա նախատեսված է նաեւ կառավարության գործող ծրագրով: Մենք աջակցել ենք նաեւ համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի մշակմանը, եւ հաջորդ փուլում դրանք պետք է վերածվեն տարեկան աշխատանքային պլանների, որոնք հնարավորություն կտան որոշակի ցուցիչների սահմանման միջոցով մշտադիտարկել այդ ծրագրերի իրականացումը եւ գնահատումը»,- ասաց «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի Հայաստանի թիմի ղեկավար Զարթին Շեֆերը: Վերջինիս գնահատմամբ, այս աշխատաժողովը սկիզբ է դնում մի շարք միջոցառումների, որոնք ուղղված են լինելու պլանավորման հետ կապված համայնքային ծառայողների վերապատրաստմանը: Տիկին Շեֆերը տեղեկացրեց, որ այդ միջոցառումներն իրականացվելու է ծրագրի գործընկերը՝ Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ):

Անդրադառնալով աշխատաժողովի անցկացման բուն նպատակին՝ գԱՄՀ ծրագրի համակարգող Արմեն Բեշիշյանն ասաց. «Մեր կազմակերպության եւ ՏԿԶՆ միջեւ կա գործողությունների ծրագիր, որի շրջանակներում ներկայացվում է մեր կողմից հայտարարված մրցույթում հաղթած կազմակերպության՝ ՀՖՄ-ի կողմից մշակված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի (ՏԿՊ) մշակման մեթոդական ուղեցույց» փաստաթուղթը: Ուղեցույցի անհրաժեշտության մասին խոշորաց-



ված 18 համայնքներում նախապես անցկացվել են քննարկումներ: Փաստաթղթի կազմման ընթացքում առաջնորդվել ենք հետեւյալ սկզբունքներով՝ համակարգային մոտեցում, տվյալների ամբողջականություն մեկ փաստաթուղթում՝ որպես կառավարման գործիք:

Մեր նպատակն է, որ ՏԿՊ-երը լինեն ոչ միայն ծրագրային փաստաթուղթ, այլ նաեւ՝ լինեն այն իրատեսական հիմքը, որի վրա կառուցվում է համայնքի առաջիկա մեկ տարվա գործունեությունը եւ այդ համայնքի բյուջեն»:

Բանախոսը կարելու է այն հանգամանքը, որ «մի փաստաթուղթում ի մի են բերվում տվյալ համայնքում իրականացվող բոլոր ծրագրերը եւ միջոցառումները: Դա մի միջոց է՝ խուսափելու կրկնություններից, առկա սակավ ռեսուրսների վատնումից»:

«ՏԿՊ-ը մենք դիտարկում ենք որպես պլանավորման մշակույթի ներդրում, գործող համակարգի բարելավում: ՏԿՊ-ը շատ ավելի կոնկրետ է, հաշվետվողական եւ ավելի հասկանալի, քան ՀՀԾՆ»,- եզրափակեց պարոն Բեշիշյանը:

ՏԿՊ-ի կարելու է մասին խոսեց նաեւ ՏԿԶ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը: «Մեր պորթլենդ միջտեղ է այն, որ հեռահար պլանավորման մեջ իդեաները ֆիքսել ենք, բայց դրանք կամ վերացական են թվացել, կամ ոգեւորությունն է կորել, եւ արդյունքում ստացվել է, որ հնգամյա զարգացման պլանները դիտվել են ոչ իրատեսական: Համայնքի ՏԿՊ-երը լուրջ դերակատարություն ունեն. դրանք մի կողմից իրատեսական են դարձնում մեր մեկ տարվա աշխատանքը, մյուս կողմից՝ հնարավորություն են տալիս գնահատել այդ աշխատանքը: ՏԿՊ-ը աշխատանքի չափելիության լավագույն գործիքն է, ... բայց չպետք է անտեսել ՀՀԾՆ-ի կարելու էությունը. այն անհրաժեշտ է ՏԿՊ կազմելու համար»,- նշեց պարոն Տերտերյանը:

ԱՄՆ ՄԿԶ ծրագրերի համակարգող Արթուր Դրամիսյանը նույնպես այն համոզմունքը հայտնեց, որ «ՏԿՊ-ը մի շատ կարելու է բաց է փակում համայնքային պլանավորման եւ միջոցառումների իրականացման շրջանում: Հնգամյա ծրագիրը քաղաքական է, որովհետեւ այդ ծրագրով գալիս է թիմ, գալիս է համայնքի ղեկավար, եւ նա ինչ-որ չափով պարտավորված է զգում՝

Սակայն ծրագրի կառուցվածքի նկատմամբ պահանջները մնացել են նույնը: Եվ փորձը ցույց է տվել, որ գործող մեթոդական ցուցումների համաձայն մշակվող զարգացման ծրագիրը բազմաբնակավայր համայնքներում շատ ծավալուն է ստացվում, իսկ 5 տարվա ծրագրային կանխատեսումները՝ քիչ իրատեսական»,- նշեց բանախոսը: Նրա կարծիքով, կարիք կա մի փաստաթղթի, որը հնարավորություն կտա ՀՀԾՆ-ի բաղադրիչները տեղայնացնել տարեկան կտրվածքով: Այդ փաստաթուղթը կներառի ՀՀԾՆ-ով նախատեսված տվյալ տարվա ծրագրերը եւ միջոցառումները՝ արտացոլելով դրանց իրականացման արժեքները եւ ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները եւ վերահսկողության մեխանիզմները:

ՀՖՄ նախագահը համայնքների ղեկավարներին կոչ արեց լրջորեն վերաբերվել ՏԿՊ-ի ներդրման գործընթացին, քանզի տեղական ինքնակառավարման համակարգում ցանկացած նորամուծության հաջողությունը ամբողջությամբ կախված է դրա ներդրման ձեւից:



առաջինն է եւ ոչ ամենայնուրից, եւ որ դրա պատշաճ իրականացումը որոշակի ռեսուրսներ է պահանջում՝ այդ թվում մարդկային կարողությունների եւ ժամանակային: Իսկ գրագետ կերպով իրականացված պլանավորումն անփոխարինելի միջոց է՝ նախանշելու զարգացման ուղղությունները եւ դրանց հասնելու գործողությունների հաջողականությունը: ՀՖՄ ղեկավարը փաստեց, որ տեղական ինքնակառավարման համակարգում պլանավորման ռազմավարական գործիքը բացակայում է: «Մինչեւ վերջերս ՀՀԾՆ-ն բարի ցանկությունների շարադրանք էր, իսկ այդ ծրագիրը չէր կարող աշխատել, որովհետեւ ծրագրավորման կարելու էությունն բոլոր գործիքներն օգտագործված չէին: ՀՀԾՆ-ի մշակման միասնական մեթոդաբանությունն չի եղել, իսկ այդ ծրագրերը մշակելու գիտելիքներն ու հմտությունները ձեռք են բերվել տարբեր դասընթացների շրջանակներում: Ավելին՝ վերջին մեկ տարում զարգացման ծրագրերի մշակման նկատմամբ պահանջներն ավելի են խստացել եւ ընդգրկում են ավելի լայն շրջանակներ՝ ներառելով տնտեսական զարգացման բաղադրիչներ: Եթե նախկինում ՀՀԾՆ-ն կազմվում էր 3 տարվա կտրվածքով, ապա այժմ արդեն՝ 5 տարվա:

մակերպություններին, բնակիչներին, քաղաքացիական հասարակության եւ մասնավոր հատվածի կազմակերպություններին եւ խմբերին պատշաճ մակարդակով մշակելու եւ կառավարելու գալիք տարիների ՏԿՊ-երն ու դրանց իրականացման մոնիթորինգի եւ գնահատման պլանները:

ՏԿՊ-ի մշակման նպատակներն են՝ համակարգել ՏԿՊ-երի տվյալ տարվա անելիքները, սահմանել ֆինանսական միջոցներով դեռեւս չապահովված ծրագրերի եւ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարությունը, համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը եւ միջոցառումները, շարժապեղ նախատեսվող ծրագրերը եւ միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ, որոշակիացնել նախատեսվող ծրագրերի եւ միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները եւ միջոցները, պատասխանատուներին եւ ժամկետները»,- նշեց ՀՖՄ ավագ փորձագետը: Վերջինս հավելեց, որ համայնքի ՏԿՊ-ի հիմքում դրվում են պետական (այդ թվում՝ մարզային) ռազմավարություններ եւ պետական ու համայնքային զարգացման ծրագրեր: Բանախոսը խոսեց նաեւ համայնքի պարտադիր ինդիկատորների եւ համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառների (ուղղությունների) համապատասխանության, ոլորտային ծրագրերի տեղաբաշխման բնագավառների եւ բյուջետային դասակարգման բաժինների համապատասխանության, ՏԿՊ-ում ներառված ծրագրերի մեթոդաբանական ու ծրագրային հենքերի, ՏԿՊ-ի եւ ՀՀԾՆ-ի, բյուջեի, համայնքապետարանի կապերի մասին:

ՀՖՄ ավագ փորձագետը մանրամասնեց նաեւ համայնքի տեսլականն ու ոլորտային նպատակները՝ նշելով որ «ՏԿՊ-ի իրականացումը պետք է նպաստի համայնքի կայուն զարգացմանը, եւ յուրաքանչյուր ոլորտային նպատակի համար պետք է սահմանվեն ոլորտի զարգացման վրա ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ՝ իրենց թիրախային արժեքներով: Ոլորտային նպատակների համախմբումը պետք է ապահովի համայնքի տեսլականի իրականացումը, այսինքն՝ համայնքի կայուն զարգացումը»:

Ուղեցույցում ներկայացվում է նաեւ համայնքի ՏԿՊ-ի կառուցվածքը, մշակման ընթացակարգը, իրականացումը, մոնիթորինգը եւ գնահատումը, հաշվետվությունների կազմումը, քննարկումը եւ ընդունումը:

Աշխատաժողովի ժամանակ նախանշվեց նաեւ որոշակի ժամկետ, որի ընթացքում ՏԿԶՆ-ը, համայնքապետերը, փորձագետները կարող են ներկայացնել իրենց նկատառումները եւ առաջարկությունները՝ ուղեցույցը լրամշակելու եւ համայնքներում գործողության մեջ դնելու համար:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Հոդվածում տեղեկություններ կան գյուղի եւ Վանաձոր քաղաքներում անցկացված ՏԻՄ ընտրությունների, ինչպես նաեւ բազմաբնակավայր համայնքների ընտրված ղեկավարների համամասնության վերաբերյալ: Փորձագետն անդրադարձել է նաեւ համայնքի ընտրված ղեկավարների կուսակցական պատկանելությանը, եւ ըստ արդյունքների, մեծամասնություն են կազմում Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչները:

Գրքի կարեւոր մասերից է համայնքների սեփականությանը, զարգացման ծրագրերին եւ ֆինանսական անկախությանը վերաբերող վերլուծությունը, որը ինչպես այս, այնպես էլ նախկին հրատարակություններում, կատարել է ՀՀՄ փորձագետ Լեւոն Թումանյանը: Հոդվածի հեղինակը փաստում է, որ համայնքների ֆինանսական անկախության մակարդակը մնում է խիստ ցածր, սեփականությունը անբավարար է ու հնացած, իսկ համայնքի սեփական միջոցները ընդհանուր եկամուտների մեջ կազմում են մոտ 26,7%: Նմանատիպ ցուցանիշներով Հայաստանը եվրամիության երկրների շարքում գտնվում է վերջին հորիզոնականներում: Անդրադառնալով օրենսդրական փոփոխություններին՝ Լ. Թումանյանը նշեց, որ ֆինանսների առումով դեռեւս մի շարք բացեր կան: Բանախո-

սը տեղեկացրեց, որ 2016թ. նկատվել է համայնքների բյուջետային եկամուտների նվազում, դրան հակառակ մեծ է մնում Երեւանի բյուջեի եկամուտների մասնաբաժինը՝ 60,1%, որը եականորեն գերազանցում է մնացած համայնքների բյուջետային եկամուտներին:

Նշվեց, որ համայնքների սեփականության միջոցները հնացած են եւ շահագործման համար անպիտան, ավելին՝ 2016թ. նվազել են նաեւ դրանց վերանորոգման եւ ձեռք բերման համար նախատեսվող ծախսերը:

Որպես բացասական երեւույթ փորձագետը հիշատակեց ջրամատակարարման համակարգը կառավարությանը հանձնելը՝ համարելով դա հետընթաց քայլ ապակետրոնացման ճանապարհին:

Լ. Թումանյանն անդրադարձավ նաեւ համայնքների հաշվետվողականությանը, բյուջետավարմանը, զարգացման հնգամյա ծրագրերին, որոնք կազմվում են ձեռնարկներով, եւ հույս հայտնեց, որ համայնքների խոշորացման գործընթացի ավարտից հետո դրական տեղաշարժեր կլինեն:

Արդեն երրորդ տարին է, ինչ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքում համայնքների խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային եւ տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությանը եւ միջազգայ-



ին աջակցությանը վերաբերող վերլուծությամբ հանդես է գալիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս, գիտությունների դոկտոր Ռուբեն Հայրապետյանը: Բանախոսը տեղեկացրեց, որ մարդկային եւ տեղեկատվական ռեսուրսների առումով եական տեղաշարժեր չկան, եւ մարդկային ռեսուրսի պակասը, որի պատճառներից մեկն էլ համայնքային բյուջեի սահմանափակ լինելն է, ազդում է հանրային ծառայությունների ծավալի եւ որակի վրա: Եվ որպես այս իրավիճակից դուրս գալու ուղի Ռ. Հայրապետյանը նշում է վարչատարածքային բարեփոխումները: Նա տեղեկացրեց, որ նախորդ տարիների համեմատությամբ նույնն են մնում նաեւ ատեստավորման, վերապատրաստ-

ման հետ կապված խնդիրները, կադրային պահուստը դիտարկվում է ոչ արդյունավետ միջոց: Շարունակվում է համայնքների տեղեկատվայնացման գործընթացը. մի շարք համայնքներում գործում են համայնքների կառավարման տեղեկատվական համակարգեր, բացվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ:

Կարելի էրելով միջազգային աջակցությունը՝ Ռ. Հայրապետյանը խոսեց նաեւ դրա հետ կապված բացասական հետեւանքների, ռիսկերի մասին: Գրքում գետեղված հոդվածներից մեկն էլ վերաբերում է համայնքային ծառայությունների մատուցմանը: Հոդվածի հեղինակը ՀամաՏեղ ծրագրի փորձագետ Վահե Սարգսյանն է, որը ներկայացրեց վերլուծության արդյունքները: Վերջինս

նշեց, որ մայրաքաղաքում եւ մի շարք համայնքներում իրականացվել են կանաչապատման աշխատանքներ, դուրս կազմակերպությունների աջակցությամբ հիմնվել են անտառներ, դրական տեղաշարժեր են արձանագրվել աղբահանության իրականացման հարցում:

Փորձագետն անդրադարձավ ջրամատակարարման, ներհամայնքային տրանսպորտին վերաբերող հարցերին, համայնքներում մշակութային կյանքին, ինչպես նաեւ կարեւորեց «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքում կատարված փոփոխությունները:

Ի լրումն հնչած բազմաթիվ դրվատական խոսքերի, ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի համակարգող Արթուր Դրամփյանը շնորհավորեց ՀՀՄ-ին եւ համընկերության անդամ մյուս կազմակերպություններին հերթական գրքի տպագրության առթիվ, նշելով, որ «ամեն անգամ մի նորարարություն, որակի բարելավում է տեղի ունենում: Սա այն գիրքն է, որը կարդում են ամեն տեղ, որը պահանջված է, որն ունի իր կյանքը»:

ՀԱՍՄԻԿ ԵՐԵՎԱՆ

2017թ. սեպտեմբերի 19-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ Լոռու մարզի Թումանյան համայնքի Ահնիձոր եւ Մարց գյուղերում բացվեցին նորակառույց երկու վաղ ուսումնառության կենտրոններ:

Ահնիձորի եւ Մարցի երեխաներն իրենց բնակավայրերում երբեք էլ նախադպրոցական կրթություն չեն ստացել: Տվյալ եւ մոտակա գյուղերի բնակչությանը նախադպրոցական կրթական ծառայություններ տրամադրող՝ Թումանյան համայնքային կենտրոնի կամ Լորուտ գյուղի միջեւ 1 ժամվա ճանապարհ է: Տեղաբնակ 3-ից 6 տարեկան 30, իսկ առաջիկայում՝ առավել մեծ թվով երեխաների համար նորակառույց կենտրոնները կտրամադրեն երեխաների տարիքին համապատասխան կրթություն եւ զարգացնող միջավայր:

Բացման արարողությանը ներկա էին Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ տիկին Տանյա Ռադոչայը, ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը եւ Թումանյանի համայնքի ղեկավար Լեւոն Չավարյանը: Ներկա էին նաեւ գործընկեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի անդամներ, ծնողներ եւ երեխաներ:

«Նախադպրոցական կրթու-

ԱՌՎՋԻՆ ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՆԻՁՈՐ ԵՎ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

թյունը մարզում առաջնահերթություն է՝ հատկապես հեռավոր բնակավայրերում՝ համայնքների կոնսոլիդացման կոնտեքստում», - նշեց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: «Դժվար է հիմնել եւ պահպանել ավանդական տիպի մանկապարտեզներ փոքր եւ գյուղական բնակավայրերում: Համայնքների, ինչպես նաեւ խոցելի եւ համապատասխան զարգացնող միջավայրից զրկված երեխաների համար՝ առավել քիչ ծախսեր պահանջող եւ երկարաժամկետ օգուտներ ունեցող ՅՈՒՆԻՍԵՖ-ի այս մոդելը կարող է արդյունավետ կերպով կիրառվել նաեւ այլ մարզերում»:

Կենտրոններում երեխաները ուսուցում կստանան ժամանակակից խմբաենյակներում՝ 10-15 հոգուց բաղկացած փոքր խմբերով: Երեխաների տարիքին համապատասխան զբաղմունքների եւ խաղերի միջոցով՝ կենտրոնները հնարավորություն կտան նրանց ինտերակտիվ ուսուցման մեթոդներով օրական մինչեւ 4 ժամ սովորելու: Վաղ տարիքի երեխաներին իրենց տարիքին համապատասխան մեթոդներով որակյալ կրթություն տրամադրելու համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը եւ «Քայլ առ



քայլ» բարեգործական հիմնադրամը վերապատրաստել են համայնքի 6 անդամների: Թումանյանի պետական մանկապարտեզը կծառայի որպես մեթոդական կենտրոն՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր համայնքում ապահովել գիտելիքների շարունակականություն: «Վաղ մանկական ուսումնառությունը կյանքում հաջողության հասնելու հիմնաքարն է, քանի որ հենց այդ ժամանակահատվածում է երեխաների ուղղելն առավել արագ զարգա-

րամադրեն: Մենք հուսով ենք, որ ապագայում Հայաստանի այլ հեռավոր գյուղական համայնքներում եւս նման հնարավորություն կստեղծվի»:

Կենտրոնները հիմնադրվել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Թումանյան քաղաքային համայնքի, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի եւ Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՀՄ) համագործակցության շնորհիվ՝ այս տարվա սկզբում ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

Հաջորդ հինգ տարիների ընթացքում Թումանյանի համայնքը հանձն կառնի կենտրոնների պահպանման, ակտիվների կառավարման եւ նախադպրոցական կրթության ուսուցիչների աշխատավարձերի տրամադրման պարտավորությունը: Մինչեւ այժմ համայնքը նպաստել է կենտրոնների հիմնադրմանը՝ տրամադրելով տարածք եւ աշխատուժ դրանց վերանորոգման համար:

Այս տարվա նոյեմբերին ՅՈՒՆԻՍԵՖ-ը եւ գործընկերները նախատեսում են նմանօրինակ եւս երկու կենտրոն բացել Թումանյան համայնքի Շամուտ եւ Աթան բնակավայրերում:

Հuun <http://unicef.am-ի>

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՀԱՄԱՏԵՂԻ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արդեն երեք տարի է ՀՀ-ում ակտիվ դերակատարում ունի ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ գործող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագիրը, որն իրականացնում է 6 կազմակերպություններ՝ Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ-ն (ՀՖՄ), Տեղակալական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոնը (ՏՀՎԿ), Երեւանի մամուլի ակումբը (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը (ԵՀՀ) եւ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ): Համընկերությունը գլխավորում է ՀՖՄ-ն:

Հնգամյա այս ծրագիրը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող ամենախոշոր ծրագիրն է, որի նպատակն է բարձրացնել տեղական ինքնակառավարման եւ ապակենտրոնացման բարեփոխումների գործընթացում հանրային մասնակցության աստիճանը:

Համընկերության անդամ կառույցների ղեկավարները եւ ներկայացուցիչները 2017թ. սեպ-



տեմբերի 15-16-ին հավաքվել էին՝ ամփոփելու եւ քննարկելու ծրագրային երրորդ տարում կատարված աշխատանքները, նախանշելու առաջիկա անելիքները:

ՀամաՏեղ ծրագրի ղեկավար Վահան Մովսիսյանը հպարտությամբ արձանագրեց, որ ծրագրի աշխատանքը բարձր է գնահատվում պատկան կառույցների, մասնավորապես՝ Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության կողմից: «Որպես ՀամաՏեղ ծրագրի ղեկավար, կարող եմ հավաստիացնել, որ երրորդ տարվա սկզբից մեր աշխատանքներն էլ ավելի արդ-

յունավետ ու հզոր են դարձել, եւ մենք էլ ավելի ճանաչելի ենք դարձել: Իրավունք չունենք տեմպերը թուլացնելու, պետք է շարունակենք նույն ոգով, եւ հաջողություններն անկասկած մեծ կլինեն»,- հավելեց վերջինս:

ՀՖՄ նախագահը նշեց, որ տարվա ընթացքում արդյունավետորեն կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք նախապես պլանավորված չէին եղել, եւ առանձնացրեց ծրագրային մի քանի բաղադրիչներ, որոնք որակական նոր մակարդակ են ձեռք բերել: Վ. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ԱՄՆ ՄԶԳ-ին՝ ծրագրի ֆինանսավորման եւ

աջակցության համար, ծրագրի անդամներին՝ նվիրված ու հետեւողական աշխատանքով ընդհանուր գործի արդյունավետության բարձրացմանը նպաստելու համար: Առանձնակի կարեւորեց ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի համակարգող Արթուր Դրամիսյանի դերը, որը միշտ կանգնած է իրենց կողքին:

Վերջինս մասնավորապես նշեց. «Մոտենում ենք ծրագրային չորրորդ տարվա... Շատ աշխատանքներ են կատարվել, լուծվել են կարեւորագույն շատ խնդիրներ: Դուք նվաճել եք բարձունքներ, որտեղից ավելի հեռուն է երեւում, եւ հետեւաբար, կարող եք ավելի հավակնոտ լինել»:

ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչը կոչ արեց պատրաստ լինել դիմագրավելու առաջիկա մարտահրավերները եւ առաջարկեց չորրորդ տարվա անելիքները պլանավորելիս լինել ավելի ճկուն, քանի որ դրանք պետք է լինեն հինգերորդ ավարտական տարվա հենքը:

ՀամաՏեղ ծրագրի համակարգող Միքայել Հովհաննիսյանն ամփոփ ներկայացրեց երրորդ տարվա աշխատանքները եւ արձանագրեց, որ տարին եղել է արդյունավետ, իրականացվել են գրեթե բոլոր բաղադրիչները, որոնք նախանշվել էին ամրագրվել

էին:

Երկրորդ հավաքի ընթացքում ներկայացվեցին ներքին դիտարկման արդյունքները, քննարկվեց չորրորդ տարվա գործողությունների պլանը, որի հիմքում ընկած էին մի քանի նպատակներ:

- կայունացնել եւ հզորացնել ՏԻ եւ ապակենտրոնացման բարեփոխումների իրականացման ընթացքում քաղաքացիների մասնակցությունը եւ շահերի ներկայացմանն ուղղված ԶԿԿ-ների կարողությունները,
- ուժեղացնել ԶԿԿ-ների կարողությունները՝ կենտրոնական եւ տեղական իշխանությունների աշխատանքը եւ ապակենտրոնացման բարեփոխումների ընթացքը դիտարկելու նպատակով,
- բարձրացնել քաղաքացիների համար ապակենտրոնացման բարեփոխումների մասին անկախ եւ վստահելի տեղեկատվության հասանելիության մակարդակը,
- բարելավել ԶԿԿ-ների գործունեության միջավայրը՝ ապակենտրոնացման բարեփոխումներին մասնակցության համատեքստում:

Քննարկվեցին նաեւ այն ուղղությունները, որոնց համար պետք է գումարներ տրամադրվեն պահուստային ֆոնդից:

Վերջինի հետ կապված առաջարկությունները եւ չորրորդ տարվա համար նախանշված ծրագրերը, լրամշակվելուց հետո ներկայացվելու են ԱՄՆ ՄԶԳ՝ քննարկման եւ հաստատման:

ՀԱՍՏԻԿ ԲԵՐՈՒՅԱԼ

ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ

Հանդիպում ապագա հանրային կառավարիչների հետ

Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ) ամեն տարի կազմակերպում է ավանդական հանդիպում ուսանողների հետ, նպատակ ունենալով ներկայացնել տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող գործընթացները՝ իրենց դրական եւ բացասական կողմերով, դրանց առնչությամբ ՀՖՄ-ի վերաբերմունքը, ինչպես նաեւ հնարավորություն ընձեռել՝ ստանալու ոլորտին վերաբերող իրենց հարցերի պատասխանները:

Այս տարին եւս բացառություն չէր, օրեր առաջ ՀՖՄ-ի եւ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան-ի (ՀՌԿԿ) համատեղ ջանքերով Երեւանի պետական համալսարանում (ԵՊՀ) անցկացվեց հերթական՝ «ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումները» թեմայով քննարկում-հանդիպումը, որին մասնակցում էին ԵՊՀ եւ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) դասախոսներ, Հանրային կառավարման ամբիոնի ուսանողներ, մագիստրանտներ:

ՀՌԿԿ ղեկավար Հեղինե Մանասյանը կարեւորեց քննարկման անցկացումը, քանի որ ՀՀ քաղաքացիներն անմասն ու անտեղյակ են մտնում երկրում ընթացող բարեփոխումներից, եւ սալավագույն առիթն է ՏԻ համակարգի գիտակ մարդկանցից լսել ոլորտում կատարվող փոփոխությունների մասին:

ՀՖՄ ավագ փորձագետ Վահրամ Շահբազյանը նախ հակիրճ պատմեց ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ գործող ՀամաՏեղ ծրագրի մասին, որի շրջանակներում իրականացվեց հանդիպումը:

ՀՖՄ փորձագետն անդրադարձ կատարեց համակարգի ձեւավորմանը եւ 20-ամյա պատմությանը:

Բանախոսն ասաց, որ համակարգում տեղի ունեցող զարգացումները եւ օրենսդրական փոփոխությունները տարիներ շարունակ մտնում են ՀՖՄ-ի ուշադրության կենտրոնում:

«Անհրաժեշտ է ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը որոշակի գնահատման եւ մոնիտորինգի ենթարկել, եւ այդ առաքելությունը ստանձնել եւ իրականացնում է մեր կազմակերպությունը. փորձում ենք յուրաքանչյուր տարվան համընթաց պատրաստել տարեկան գեկույց: Վերջերս հրապարակվեց 9-րդ գիրքը, որտեղ ավելացվեց ՏԻ տարեկան ինդեքսը: Այս գրքերից օգտվում են ուսանողներն ու դասախոսները, տեղական պաշտոնյաներից մինչեւ բարձրաստիճան այրեր, տեղական եւ միջազգային փորձագետներ, քանի որ այն երկլեզու է»,- նշեց հերթական գրքի խմբագիրը: Վերջինս մանրամասնեց ՏԻ համակարգին առնչվող մի քանի օրենսդրական փոփոխություններ՝ առավել հանգամանակից անդրադառնալով «Ֆինանսական համագործակցության մասին» նոր օրենքին, «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքին:

Վ. Շահբազյանը ներկայացրեց նաեւ հարկային օրենսգրքի այն փոփոխությունները, որոնք



վերաբերում են տեղական հարկերին, ապա անդրադարձավ այսօր ամենաշատը քննարկվող՝ վարչատարածքային բարեփոխումներին:

«Համայնքների խոշորացման գործընթացին վերաբերող ուսումնասիրությունները մեր կազմակերպությունը սկսել էր շատ ավելի վաղ՝ 2007-2008 թվականներից: Առաջինն ուսումնասիրեցինք Արագածոտնի մարզը եւ այս ուղղությամբ ներկայացրինք որոշակի առաջարկներ: Հետագայում Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության եւ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) համագործակցությամբ ուսումնասիրություններ կատարվեցին Սյունիքի, Արարատի, Վայոց Ձորի եւ Կոտայքի մարզերում: Այս ուսումնասիրությունների արդյունքում 2011թ. կառավարության կողմից ըն-

դունվեց «Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգ», որի հիման վրա որոշում կայացվեց գործնական փուլ մտցնել համայնքների խոշորացման գործընթացը»,- նշեց ՀՖՄ ավագ փորձագետը: Վերջինս հայտնեց, որ համայնքների միավորման գործընթացն արդեն գրեթե կիսով չափ իրականացվել է, եւ ըստ կառավարության հաստատած ծրագրի՝ այն նախատեսվում է ավարտել 2019-ին:

Վ. Շահբազյանը նշեց, որ ՀՀ-ում գործող միջհամայնքային կառույցներն ունեցել են հասարակական կազմակերպության կարգավիճակ, իսկ նրանց մի մասն էլ, ունենալով իրավաբանական անձի կարգավիճակ, զբաղվել է հողի հարկի եւ գույքահարկի գանձման աշխատանքներով:

Բանախոսը տեղեկացրեց

նաեւ, որ ՏԿԶՆ կողմից մշակվել է այս օրենքի նախագիծը: ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում այն քննարկվել է Երեւան, Վանաձոր եւ Սիսիան քաղաքներում, ստացվել են մի քանի տասնյակ առաջարկություններ: ՀՖՄ եւ ՏԿԶՆ փորձագետների կողմից նախագիծը լրամշակվել է եւ ամենայն հավանականությամբ առաջիկայում կներկայացվի կառավարության քննարկմանը:

Տարիներ շարունակ ՀՖՄ-ի ուշադրության կենտրոնում են եղել տեղական ժողովրդավարությանը, ապակենտրոնացմանը, համայնքային բյուջեին, սեփականությանը եւ ռեսուրսներին, մատուցվող ծառայություններին վերաբերող հարցերը, որոնց մասին նույնպես խոսվեց հանդիպման ընթացքում:

ԵՊՀ դասախոս Է. Զալախարյանն արժեւորեց նմանօրինակ հանդիպումները, գրքի հրատարակումը եւ խնդրեց նշել համայնքների միավորման մի քանի դրական եւ բացասական կողմեր:


Բարձրաձայնվեցին նաեւ ապակենտրոնացմանը, վարչատարածքային բարեփոխումներին, ՏԻ համակարգին վերաբերող մի շարք հարցեր:

Հանդիպման մասնակիցները առաջարկեցին նմանօրինակ հանդիպումներ կազմակերպել ավելի հաճախ ու առավել մեծ լսարանի համար:

Հ. ԲԵՐՈՒՅԱԼ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԳՈՐԾՈՒՆԵԱԿԱՆ ԽԱՂ

Մշակվեցին տեղական ինքնակառավարման զարգացման մոդելներ



լու դեպքում հնարավոր է հասնել ոլորտում գոյություն ունեցող խնդիրների արդյունավետ լուծմանը: Տեղական ինքնակառավարման ներկայացուցիչ Սուրեն Ներսիսյանը գտնում է, որ մտազորիի ընթացքում մշակվել են բավականին արդյունավետ մեխանիզմներ, որոնց իրագործման համար աշխատանք է ժամանակ է պահանջվում:

Միջոցառման ձեռնարկը հնարավորություն տվեց մասնակիցներին անդրադառնալ ՏԻ ոլորտի տարբեր խնդիրներին


կերպը: Խաղի մեթոդաբանությունը հնարավորություն ընձեռեց խմբերին հասկանալու առաջադրված խնդիրները և առկա միջոցներով տեսանկյունից: Դրա շնորհիվ մասնակիցները ստեղծեցին իրենց ընդհանուր բառարանը, համաձայնության

հասարակության և տեղական ինքնակառավարման զարգացմանն ու բարելավմանը և կիրառելի են տարբեր ծրագրերի միջոցով: Խաղի մասնակիցներից Ալեքսանդր Մարտիրոսյանը նշում է. «Սովորաբար, մենք աշխատում ենք գոյություն ունեցող համակարգերի, բանաձևերի և սխեմաների օգնությամբ ու կիրառմամբ, սակայն սա առաջին փորձն էր, երբ բառերն ստացան նոր իմաստներ և սահմանումներ, և այդ նոր

Սեպտեմբերի 8-12-ը ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Հասարակություն և տեղական ինքնակառավարում. զարգացման հեռանկարներ» թեմայով կազմակերպագործունեական սեմինարը (կամ կրեատիվ խաղը), որը ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում նման ձեռնարկով երկրորդ միջոցառումն էր:

Քառօրյա միջոցառման նպատակն էր, ներգրավելով շահառու բոլոր խմբերի ներկայացուցիչներին, քննարկել տեղական ինքնակառավարման բարեփոխումներին քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավոր ռազմավարությունը, դրանից բխող գործողություններն ու նախագծերը, ինչպես նաև մշակել արդյունավետ հանրային մասնակցության ռազմավարություն և գործիքներ:

Միջոցառմանը մասնակցում էին քաղաքացիական հասարակության, տեղական ինքնակառավարման և հարակից այլ ոլորտների 50-ից ավելի ներկայացուցիչներ և փորձագետներ, ինչպես նաև համայնքների ակտիվ երիտասարդներ: Խաղի արդյունքում կմշակվեն մի շարք



առաջարկություններ, որոնց կիրառումը կնպաստի տեղական ինքնակառավարման ոլորտում հասարակության ակտիվ ներգրավմանը և մասնակցությանը:

Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ-ի փոխնախագահ Աբրահամ Արտաշեսյանի խոսքով, քառօրյա ակտիվ մտազործունեությունը հնարավորություն տվեց հասկանալու ոլորտում առկա խնդիրները և պատկերացնելու, թե ինչպիսի լուծումներ են անհրաժեշտ այդ խնդիրների հաղթահարման համար: Առաջին հայացքից վերացարկված թվացող լուծումները առարկայական դարձնե-


ակտիվ և հազեցած կոլեկտիվ մտազործունեության միջոցով: Ողջ միջոցառման ընթացքում մասնակիցները դիտարկեցին «գյուղ և քաղաք», «շուկա», «ենթակառուցվածքներ և կառույցներ», «կառավարում և ինքնակառավարում», «համայնք և աշխարհի» «համայնքի աշխարհը» խմբերի կազմում առաջադրվող խնդիրները՝ ընտրված դիրքի տեսանկյունից, ինչը հնարավորություն տվեց բազմակողմանիորեն քննարկել համայնքի ապահովությունը և անվտանգությունը, շահը և օգուտը, ծրագրերը և գործելա-



գալով գոյություն ունեցող հասկացությունների նոր սահմանումների շուրջ, նորովի քննարկելով և սահմանելով քաղաք և գյուղ, ենթակառուցվածքներ, համայնք, շուկա և այլ հասկացություններ: Արդյունքում մշակվեցին թիմային մոդելներ և մեխանիզմներ, որոնք ուղղված են

իմաստների հիմքում ստեղծվեցին սխեմաներ, որոնք անկախ են և կիրառելի տարբեր իրավիճակներում»:

ՋՈՒՅՍ ՍՄՅԱԿՅԱՆ
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, ծրագրերի օգնական



ԲՅՈՒՋԵ ՅԵՏ ԶՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ 830 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԸ

Աշտարակ քաղաքի ավագանին Արագածոտնի մարզպետ Աշոտ Միմոնյանի հանձնարարականով պետք է նիստ գումարեր և օրենսդրության պահանջներին համապատասխան վերացնել ավագանու այն որոշումներում տեղ գտած խախտումները, որոնցով ավագանու անդամները «կողմ» էին քվեարկել իրենց գույքային արտոնություն տալու որոշումներին: Հուլիսի 17-ին հրապարակել էինք, որ Աշտարակ քաղաքի ավագանու անդամները վերջին երկու տարիներին օրենքի խախտումով հողային և գույքային արտոնություններ են սովել իրենց, մասնակցել են այդ որոշումների քվեարկությանը և կողմ քվեարկել:



Լուսանկարում՝ Թովմաս Շահվերդյան

Մեր հարցմանն ի պատասխան, օրեր առաջ Աշտարակի քաղաքապետարանից պարզաբանել են, որ սեպտեմբերի 7-ին ավագանին նոր որոշումով անվավեր է ճանաչել ավագանու 5 անդամների՝ Վահագն Մկրտչյանի, Տիգրան Գալստյանի, Նորիկ Անդրեասյանի, Նավասարդ Պետրոսյանի, Աշոտ Հունյանի քվեարկությունները, որոնցով նրանք 2015-2016 թթ.-ին մասնակցել են իրենց հողային և գույքային արտոնություններ տալու մասին հարցի քննարկմանը և կողմ են քվեարկել:

Քաղաքապետարանը քվեարկություններն անվավեր ճանաչելու որոշումների հիմքում դրել է «Տեղական ինքնակառավարման մարմինների» մասին օրենքի այն կետը, որով ավագանու անդամը չպետք է մասնակցի ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:

Միանշանակ է, որ ավագանու անդամները լիազորություններն ստանձնելուն պես պարտավոր էին իմանալ օրենքի այդ պահանջի մասին: Սակայն, մեր

ասելիքն առաջին հերթին վերաբերում էր նրան, որ ավագանու հիշյալ անդամներին արտոնություն տալու որոշումներում չկան նրանց արտոնություն տալու հիմնավորումները:

Այս որոշումների ընդհանուր հանրագումարով՝ ավագանու անդամներին տրված արտոնությունների չափը 830 հազար դրամ է: Ոչ կամայական վերաբերմունք չցուցաբերելու դեպքում՝ այս գու-

մարները կարող էին հետ վերադարձվել համայնքային բյուջե և առավել նպատակային օգտագործվել՝ կանխելով նման խախտումների կրկնությունը: Մինչդեռ, ավագանին որոշել է միայն անվավեր ճանաչել նրանց քվեարկությունները:

Ստացվում է, որ ավագանու անդամներն իրենք իրենց կարող են արտոնություններ տալ, քվեարկել դրանց օգտին, իսկ, երբ հանկարծ բացահայտվի օրենքի այդ խախտումը, ընդամենն անվավեր կճանաչվի քվեարկությունը:

ԴԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ
25 սեպտեմբերի, 2017
hetq.am

Նախապատմությունը

Հատվածներ «Աշտարակի ավագանու անդամները կողմ են քվեարկել իրենց արտոնություն տալու որոշումներին» հոդվածից (հուլիսի 17, 2017, hetq.am, հեղինակ՝ Դիանա Ղազարյան)

Աշտարակի ավագանու անդամները վերջին երկու տարիներին, օրենքի խախտմամբ, իրենց հարկային և գույքային արտոնություններ են սովել, մասնակցել այդ որոշումների քվեարկությանը և կողմ քվեարկել: 2016-ից մինչև այս տարվա հունիս Աշտարակի քաղաքապետարանը աճուրդով համայնքային սեփականություն հանդիսացող 32 հող է օտարել: Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդով ձեռք են բերել նաև ավագանու անդամները: Օտարման գործարքները կատարվել են և նախկին քաղաքապետ Արմեն Անտոնյանի, և սեպտեմբերի 18-ի որոշմամբ քաղաքապետ ընտրված Թովմաս Շահվերդյանի օրոք:

